

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ

Թ. ՏԱՐԻ 1945

### ՀԻՆ ՀՈՅՑՍՑՈՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԸՀՄԸՆՐ ՓՈՔՐ-ՀՈՅՔ ԵՒ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐՇՍԻՆ)

ԳՐԵՑ Հ. Յ. ՏԱՇԵԱՆ


(Շարունակություն):

Հայոց համար ծանրակշիռ եղան 570/71 տարիները: Եղած չէ Փարպեցի մը եւ Եղիշէ մը՝ որ նկարագրէր նոյն դէպքերը՝ կրկնութիւն Վարդանայ օրերուն: Դուին շինուած ատրուշանը եւ առ հասարակ կրօնական հաւածանաց ուրուականը պատճառ էր Պարսկահայոց ապստամբութեան, միայն թէ այս անգամ Հոռոմայեցւոց կայսրն էր որ ամէն խոստում տուած էր օգնութեան՝ Յուստինոս Բ. (565—578, «խելադար»՝ ինչպէս կ'որակեն նոր պատմիչք. յետոյ կանխաւ ալ դահակից Տիրեբրիոս՝ 578—582): Պարագլուխն էր դարձեալ Մամբրիոս՝ Վարդան, եւ Հայք յաճախ ամբ առնուլ Դուինը եւ մարտնչելու ինքնան մը՝ սպանուեցաւ: Այս անգամ ալ Սիւնեաց տէրը նման դեր մը կը խաղայ, արդէն կանխաւ հասան Սիւնեաց կը խնդրէ Խոսրովէ «զի պատճառով զիւրեան աշխարհին Սիւնեաց ի Դրեւոյ ի Փայտակարան քաղաք եւ կարգեացէ՛ զքաղաքն ի շահումուր (նահանգական հարկադրուան) Ատրպատականի, զի մի՛ եւս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա, եւ կը կատարուի (Սեր. Գ, ա): Այս պարզ ծանօթութեան տակ շատ ծանրակշիռ դէպք մըն է պատմուածը, Պարսկահայաստանի համար: Հոս ալ իրերը նոյն էին, այն է Պարսկահայաստան ամբողջութիւն մը կը կազմէր միշտ, եւ նախարարք՝ Մարզպանի մը փոքր պայական երիշխանութեան տակ՝ պատմութիւն իրենց վարչական եւ զինուորական իշխանութիւնը: Մարզպանն՝ եւ կրնանք ըստ արշակունի արքային տեղը կը առնէր, որ իրաց մէջ (բանակ կախում ունէր

Ատրպատականի վերնագոյն վարչութենէն եւ անով՝ արքայից արքայէ: Պարսկահայաստան շատ տկարացած էր արդէն ՅՏԴ թաթանման ատեն. այլեւայլ սահմանադաւաճումներ անջատուած էին արդէն, ինչպէս Պարսկահայք նահանգը: Արդնեաց բղեաշխն իւր երկիրներով նոյնպիսի փոխարքայական ուրոյն դերը մ'ունէր՝ գրեթէ մարզպանին նման. հիւսիսակողմը՝ Գուգարք անցած էր Վրաց, Արցախ եւ Ուտի՝ Աղուանից եւն: Ասոնց նաեւ յետոյ (Վարդանանց ատենը եւն) գործակցելը դէրուաւ կը մեկնուի՝ ներքին վարչական դրութեամբ ալ. դարձեալ նաեւ Վիրք Պարսից գերիշխանութեան տակ էին, իսկ Աղուանք եղան նոյնպէս (462ին): Ուրեմն Սիւնեաց (եւ Փայտակարանի) թաթանումը պարզապէս ծանր հարուած մըն էր Պարսից թաթնի Հայոց ամբողջութեան եւ ի հարկին իրենց հաւաքելիք զինուորական ոյժին, ինչպէս նաեւ այս անգամ: Իրապէս Սիւնիք մնաց իբր մասն Ատրպատականի մինչեւ Արարացւոց տիրուպետութիւնն (640ին), որով արդէն բոլորովին փոխուեցաւ Արեւելից դրութիւնը: Այս ապստամբութեան ալ մասնակցեցան Վիրք եւ ուրիշ հիւսիսայինք: Բնականապէս Պարսք պիտի ընկճէին ապստամբութիւնը, եւ Հոռոմայեցւոց միջամտութիւնն ալ՝ որ ի վերջոյ քսանամեայ պատերազմի մը փոխուեցաւ (571—591) ի սկզբան յաջող չէր, նոյն իսկ Մծբին չկրցան առնուլ: Ասոր փոխարէն Պարսք առին Դարան (573ին) եւ աւերեցին Միջագետքը: Խոսրով արշաւեց իսկ (575ին) Հոռոմահայաստան եւ մինչեւ Գամիքը. ինչպէս Մելիտինէ՝ նոյնպէս աւելի Սերաստիա սյրացաւեր եղան: Բայց հոս կրկին անգամ յողթուելով՝ ստիպուեցաւ ետ դառնալ Եփրատէն, եւ Հոռոմայեցիք առին նաեւ Հայաստանը, բայց նորէն դուրս վտարուեցան (576): Պատերազմի երեւոյթը փոխուեցաւ երբ Հայոց պատմագրաց մէջ ալ հռչակաւոր (նոյն իսկ հայ համարուած՝ թէեւ անճիշտ)

Մաւրիկիոս նախ զօրավար եւ յետոյ կայսր (582—602). արեւելք եկաւ եւ պատերազմի զաշար փոխեց Պարսից հողի վրայ: Դաշնադրութիւնը մօտալուտ կ'երեւար՝ Խոսրովի մահուամբ (579ին). բայց բանակցութիւնք ապարդիւն եղան, եւ յաջորդը՝ Որմիզդ շարունակեց պատերազմը, եւ բախտը նորէն փոփոխ էր: Եթէ Մաւրիկ ջախջախիչ յաղթութիւն մը տարաւ Կոստանդինայի քով (581ին), որով կրնար Կ. Պոլիս դառնալ, յաջորդ շրջանին (583 եւն) իւր զօրավարը շատ մեծ բան չկրցան ընել, եւ Պարսք Նիւրկերոն անգամ առին (589ին): Ի վերջոյ ներքին ապստամբութիւն մը լիովին նպաստեց Հոռոմայեցւոց: Վահրամ Չորին՝ Որմիզդի նշանաւոր զօրավարը՝ զգածուած նախատինքն մը ուղղակի ապստամբեցաւ. եւ Որմիզդ սպանուեցաւ (590ին), իսկ որդին Խոսրով Բ. փարուէզ ուրիշ ճար չգտաւ՝ բայց եթէ ապաստանիլ Հոռոմայեցւոց՝ մեծ խոստումներով, եթէ օգնեն իրեն դահ էլլելու: Առաջարկներն այնպէս նպաստաւոր էին որ անկարելի էր չընդունիլ, եւ Ներսէս Հայկազն՝ հռչակաւոր զօրավարը՝ իրապէս դուրս հանեց (Խոսրով Բ.՝ 591—627): Խաղաղութիւնը (591ին) բնականապէս նպաստաւոր էր: Արքայից արքայն պահեց Մծրինը, բայց ետ տուաւ Դարան, Նիւրկերտը եւն. եւ յետոյ՝ պահելով իւր խոստումը՝ տուաւ Հոռոմայեցւոց Վրաց աշխարհի մեծ մասը՝ մինչեւ Տփղիս, Հայաստանի մեծ մէկ մասը՝ յատկապէս Տանուտէրական տունը (Այրարատ) մինչեւ Դուրնի մօտերը, եւ միւս երկիրները՝ մինչեւ Բզնու նեաց ծովուն եզրը եւ մինչեւ Առեստ աւան, մինչեւ Կողովիտ, Հայիւ ու Մակու (Մեր. Գ. ր եւ դ. հմմտ. Թովմ. Արծր. եւն): Այս տեղեկութեան մէջ մէկ երկու մթութիւնք կան՝ նոյն իսկ բնագրի կողմանէ: Բայց համեմատութեամբ ուրիշ բնագրաց (հայ եւ օտար)՝ Հիւրջման այս եղբակացութեան կողայ թէ սահմանադիւն էր այնուհետեւ, այնպէս որ Հոռոմայեցւոց արդէն ունեցած Բարձր-Հայք եւ Ծոփք (Դ Հայք) նահանգներուն վրայ աւելցան՝ Տայք, Այրարատայ մեծ մէկ մասը (Բասեան եւն) մինչեւ Դուրն (սահմանադիւն՝ Ազատ գետի եւ Գառնուոյ վրայէն մինչեւ Հրազդանի վերին ընթացքը), Տուրուբերան եւ Աղձնիք, հաւանօրէն նաեւ Դուրք (Վրաց աշխարհին մեծ մասին հետ): Ուրեմն Պարսից ձեռքը կը մնան՝ Մոկք, Կարքուք, Վասպուրական, Պարսկաստան

Դուրն եւ շրջակայք (Այրարատայ մասը). Միւրիք, Փայտակարան, Ուտի եւ Արցախ: Ասի մեծ կ'երեւայ տակաւին. բայց եթէ հանենք «Պարսկահայաստանէ անջատուած նահանգները (զոնէ հինգ նահանգ)՝ կը տեսնուի թէ լիովին տկարացած էր մարզպանական Հայաստանը (տես Հիւրջմ., էջ 43—50, եւ այլուր): Այսպիսի աճում մը կ'ենթադրէր նոր բաժանումն Հոռոմահայաստանի նահանգաց: Եւ իրօք եղած է նոյնը, եւ նոյն բաժանումը մնացած է՝ որչափ յաջորդ փոթորկալից ժամանակներէն կարելի եղած է պահել, զոնէ մինչեւ Յուստինիանոս Բ. (685—695. տես Գէլցէր, Բնկթեմ., էջ 28—29): Յովհաննէս Կթղ. (Պատմ. Ժզ. անկէ Վարդան) որոշ կը նշանակէ նոր բաժանումները, բայց նաեւ քանի մը շփոթութեամբք: Այսպէս ճիշդ՝ երբ կ'ըսէ թէ Մօրիկ «Բ Հայք» կոչեց Սեբաստիոյ շրջանը՝ «զԱրմենին զայն որ Առաջին Հայքն անուանիւր». ասի եղած էր արդէն Յուստինիանու ատեն: Անճիշդ է նոյնպէս թէ «Կապադովկիա, յորում մայրաքաղաք Կեսարիա եւ Բ Հայք նախ անուանեալ, կոչէ զնա Գ Հայք եւ առնէ զնա եպարքի»: Ասի պատմական չէ: Ճիշդ է թէ Մեկտիւնեայ շրջանը՝ որ Յուստինիանու «Գ Հայք»ն էր, եղաւ այսուհետեւ «Ա Հայք»: Տրապիզոնի շրջանը, կ'ըսէ, «կոչէ զնա Մասն Մեծ Հայոց» եւ նոյն յորջորջանք կ'առնու նաեւ Կարնոյ աշխարհն: Իսկ ինչ որ նոր ձեռք ձեռքին Հոռոմայեցիք՝ «ի կողմանց անտի Բասենոյ մինչեւ ի սահմանս Ասորեստանի, Մեծ Հայք զնա կոչէ», բայց Տայք կը կոչուին «Խորադոյն Հայք» եւ Դուրնոյ կողմը՝ «Ներքսագոյն Հայք»: Մթին է Հայոց մասը՝ «Եւ զԴ. կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք Մարտիրոսաց-պօլիս, այսինքն՝ Նիւրկերտ, Յուստինիանուինստ զնա գրէ ի գիւան արքունի»: Այս տեղ խոստումն էն՝ «Միւս Դ Հայք Յուստինիանա» եւ նորակազմ Մաւրիկեան «Դ Հայք՝ Միջագետաց»: Իրապէս փոփոխութիւն կրած են նաեւ հին Բարձր-Հայք եւ Ծոփական «Գ Հայք»: Բարձր-Հայք անջատուած են Պաղատուն, Խաղաղապարտ Միւր (վերջինս՝ ըստ Գէորգոյ Կիւրքեանեայ որ 590—600ին կը գրէ, ըստ Խոր. Աղջ. անցած Բարձր-Հայոց): Ասոնք անց իրական «Գ Հայոց» (որուն գաւառն էր Կարճիւնը բաժանմամբ՝ Դեղիք եւ մնացեալ գաւառներով (Ծոփք, Մեծ խաղաղապարտ, Հաշտեանք եւ Բասեան



կաղմէ «Դ Հայք» Յուստինիանա» կոչուած նահանգը. մայրաքաղաքը՝ Դադիւմա, Հանձիթի մէջ: Թէ՛ Խոր. եւ թէ Կիւր. չեն յիշեր «Անդեղ-տունը», որ կ'երեւայ այս ատեն միացած էր Մեծ-Ծոփաց, իսկ վերջինս՝ անջատուած նախընթացէն՝ Աղձնեաց եւ դարձեալ ասոնց հարաւէն սահմանակից Միջագետաց հետ կաղմած են նոր՝ «Դ Հայք եւ Միջագետք» (նաեւ Վերին-Միջագետք) մայրաքաղաք՝ Մարտիրոսաց քաղաք կամ Նիւրկերտ (ասոր համար Խորեն. Աղջ.՝ որ այս ժամանակները գրուած ըլլալու է՝ Նիւրկերտի շրջանը Աղձնեաց մէջ կը զնէ, անդին՝ Յուստինիանա Դ Հայոց մէջ գեւ չի գիտեր «Խորադոն» գաւառը, որ յետոյ եղաւ եւն): Այս կրկին «Դ Հայք» շփոթութեան առիթ մըն էին, եւ աւելի եւս եղան՝ երբ կէս դար ետքը Արարացիք տիրեցին այս վերջին «Դ Հայոց Միջագետաց» (Նիւրկերտով). եւ սովորութիւն եղաւ բաւական միջոց մը հոռոմական մնացած «Յուստինիանան» կոչել թէ՛ պարզապէս դարձեալ «Դ Հայք», եւ թէ՛ նաեւ պաշտօնական անուամբ «Յուստինիանա»: Միւս կողմանէ զլրաւոր աղբիւրներէն մին Եկեղեցական բաժանումներ, ինչպէս կը հաւաստեն ժողովոց մէջ Եպիսկոպոսաց ստորագրութիւնք, բաւական պէսպիսութիւն կը ցուցնեն, թէ եւ արդէն Յուստինիանոս որոշած էր թէ քաղաքային բաժանումներ չեն արժեք եկեղեցական թեմերուն համար: Բայց Մաւրիկի բաժանումներ աղղած են զոնէ այնչափ որ այնուհետեւ Մեկտիւնեայ թեմը միշտ «Ա Հայք» է նաեւ եկեղեցականօրէն, եւ Սեբաստիոյն՝ «Բ Հայք»: Ասկէ դուրս մերթ հին (Կոստանդին-Թէոդոսեան) բաժանմանց համեմատ է եւ մերթ եւ շատ անգամ դարձեալ նոր բաժանմանց համեմատ (այսպէս Նիւրկիպոլսոյ, Կողոնիոյ եւ Սատաղայ Եպ. կը գրեն նաեւ «քաղաքի Մեծաց Հայոց», Սեբաստիոյն՝ «Բ Հայոց» եւն): Չեն պակսիր դարձեալ ուրիշ պէսպիսութիւնք, թողով նաեւ սխալագրութիւնքը (տես Գէլցէր, Բնկթեմ. 18—29): Առանց մտնելու մանրանց մէջ՝ կը զնենք Մաւրիկեան անց պատկերը (հմմտ. Գէլցէր, սկզբեալը՝ ինչորական են):

Գ. «Դ Հայք». (Միջագետաց) շրջանք՝ Մարտիրոսաց-քաղաք կամ Նիւրկերտ—Դարա—Արզն—Մեծ-Ծոփք—Կղեսուր Բաղաղացւոց (Բաղէշ):

Ե. Յուստինիանա՝ «Միւս Դ Հայք» եւն. շրջանք՝ Դադիւմա—Արշամուշատ—Կթուիճ—Ծոփք (Շահեաց)—Դէղիք—Բալու—Խորձեան—Հաշտեանք եւն:

Զ. Մեծ Հայք: 1. «Մասն Մեծ Հայոց»՝ Բարձր-Հայք (Թէոդոպոլիս—Յուստինիանուպոլիս եւն)—Փոքր-Հայք (Սատաղ—Նիկոպոլիս—Կողոնիա)—Պոնտոսի մաս մը՝ Տրապիզոն (—Կեսասոն):

2. «Մեծ Հայք»՝ նոր առնուած մասը:

3. «Խորադոյն Հայք»՝ Տայք:

4. «Ներքսագոյն Հայք»՝ Դուրնայ կողմը, որչափ հոռոմական էր:

Այս վիճակը հաւանական չէր երեւար տեւական ըլլալու, եւ սակայն վերջ գտած է աւելի արարական արշաւանաց հետեւութեամբ քան նոյն իսկ Պարսից անսպասելի ուժովը՝ զոր ցուցուցին թիչ մ'ետքը, միջոց մը կարծես վերակենդանացընել փորձելով Աքամենեանց օրերը: Մօրիկի սպանումին (այս կայսեր մասին տես այժմ նաեւ Հ. Կ. Տէր-Սահակեան, «Հայ կայսերք Բիւզանդիոնի», Ա., 25—125 եւ 261—314) եւ Փոկասի դահակալութիւնը (602—610) պատուակ մըն էր Խոսրովու՝ իբր իւր «հօր» Մօրկայ վրէժը լուծելու, արդեամբք ետ գրանցու կորսնցուցածները: Եւ Պարսից յաջողութիւնն երկար ատեն բոլորովին անման էր: Դարայէ մինչեւ Ուռայ այնպէս գրաւուեցան Միջագետք (606), ինչպէս Անտիօքի առմամբ՝ Ասորիք (611): Յաջորդ տարիները (607/8 եւն) Պարսկահայաստանի նախընթաց սահմանին վրայ (ի Դուր եւ յՈրդորու), մեծ յաղթութեանէն մ'ետքը՝ առնուեցաւ նոյնպէս Կարին եւ բնակիչք գերեցան այլուր, ինչպէս Սատաղայի հին գորանստները, այսպէս Կթուիճը, եւ Մեկտեանէ եւ Կեսարիա նոյնպէս ինկան, ինչպէս հետզհետէ գրեթէ Փոքր-Ասիոյ մեծ մասը: Պարսից բանակը մինչեւ Քաղկեդոն անգամ հասնելով (615): Վայրազ Փոկասի բարձրամբ եւ Հերակլի պէս հանճարեղ զօրավարի դահակալութիւնը (610—641) չկր-

- շրջանք՝ Մեկտեանէ—Արկա—ն—(Կոմանա):
- շրջանք՝ Սեբաստիա—Հերակլ—ոլիս—(Բերիսա—Սեբաստուպոլիս—«Գ Հայք» չկայ):

ցաւ իրերը դիւրաւ փոխել մէկանց : Դամասկոսի անկումը (613) եւ Երուսաղէմի առումն ու մոխրակոյտ ըլլալը՝ ինչպէս Նազաւիայտին Տիգրոն փոխադրուելը (614)՝ ժամանակի ամբողջ քրիստոնէութիւնը ցնցեց : Որչափ ալ Փիլիպպիկոս զօրավարի Հայաստանի վրայ յարձակումը ստիպեց որ Շահն իւր բանակը ետ խաղցընէ, այսու հանդերձ Պարսք նորէն տիրեցին ինչպէս Անկիւրիոյ (619) եւ շրջակայ դժերուն՝ նաեւ նոյն տարին Եգիպտոսի ու Աղեքսանդրիայի : Հերակղի ծրագիրը՝ թշնամին կոնակէն զարնելու՝ գտաւ ի վերջոյ յաջողութիւն : Խնամակալութիւն զննելով Մայրաքաղաքի մէջ՝ սկսաւ իւր արեւելից արշաւանքներուն, որոնք զարմանալի ուղեգծեր ունեցան՝ մերթ հալածուելով պարսիկ զօրավարներէ, մերթ ինքը հալածուելով : Առաջին արշաւանքը (622) թերի մնաց . իսկ երկրորդին (624) անցաւ Կարնէն, աւերեց Դուրնն ու Նախճաւանն՝ իբր թէ թշնամի երկիր ըլլար, եւ իբր յայտարար կրօնական ըլլալու պատերազմին՝ աւերեց Գանձակի ատրուշանը : Ատրպատական մտնելու արգիւնքն եղաւ՝ պարսիկ զօրավարաց ետ քաշուելն եւ իրեն դէմ միանալը, որով Հերակղ հիւսիս ապաստանեցաւ՝ Վրաց եւ Լազերու հետ դաշնագիր ըլլալով : Իսկ երբ երեւցաւ նաեւ Պարսից երրորդ բանակը (625), Հերակղ անգամ Հոնաց երկիրը քաշուեցաւ, բայց յաջող պարագային Պարսկահայաստան անցաւ եւ Շահվարազի դէմ տարած մեծ յաղթութեամբ՝ կրցաւ մեծ շրջան մ'ընելով Տաւրոսի եւ Ասորիքի գծով Փոքր Ասիա դառնալ : Երրորդ արշաւանքը (626) սկսաւ Լազիկայէ, եւ թէեւ Տփղիսի պաշարումն անյաջող էր կրցաւ յառաջանալ մինչեւ Նինուէ, ուր վերջապէս տեղի ունեցաւ վճռական ճակատամարտը (627, Դեկտ.) եւ ուր Պարսից բանակը խորտակեցաւ, եւ արքունի զղեակները կործանեցան : Բայց բուն Տիգրոնի վրայ յարձակիլ անհնար եղաւ, եւ Հերակղ՝ դառնալու ատեն լսեց արքայից արքայի մահը : Յաջորդող խաղաղութիւնը (629/630) բնականապէս նպաստաւոր էր : Պարսք ելան հռոմէական բոլոր նահանգներէն, եւ Հայաստանի համար «սահման հաստատեցաւ նոյն՝ որ առ Խոսրովու եւ Մաւրկայ հաստատեալ էր» (Սեբ. Գ. իթ) : — Հռոմէահայաստանի վերջին ընդարձակումն էր այս :

Հերակղի օրերէն է որ՝ ինչպէս կ'ըսէ Գէլցեր<sup>22</sup> արեւելեան կայսրութեան համար սկսաւ իրական Միջինդարը : Արեւելքի դէմ մղուած եւ տակաւին մղուելի (Արաբաց դէմ) անընդհատ պատերազմները՝ պատճառ եղան լուրու ամէն մտաւոր զարգացման եւ «գրեթէ կատարեալ բարբարոսութեան շրջան մը սկսաւ որ տեւեց մէկուկէս դար : եւ հին յունական քաղաքակրթութիւնը հիմնովին կործանեցաւ : Հայոցս համար ալ՝ թէեւ Հին Հայաստանը, որուն եւ «Փոքր-Հայոց» յարաբերութիւնք հոս նկատի առինք, արդէն չատոնց վերջացած համարելու էինք, վերջնակէտը պէտք էնք հոս աւելի զննել, երբ՝ Արաբական տիրապետութիւնն եկաւ հիմնովայր տապալելու այնչափ դարերու կազմածը : Երկու պետութեանց համար ալ ուղղակի անպատեւել էր փոթորիկն՝ որչափ թէեւ պատճառները մասամբ հին ու խոր, եւ նոր կրօնքի մը՝ իսլամութեան՝ անդուսպ եռանդեամբ լիովին սարսափելի : Երբ Հռոմէական Արաբիա նահանգի Բոստրա մայրաքաղաքն ինկաւ (634), զգացին Հռոմայեցիք վտանգը եւ կայսրն անձամբ Անտիոք փութաց : Բայց շանթանման եղան հարուածները . Դամասկոսի անկումն (635) եւ Ասորւոց քաղաքաց անձնատուութիւնն ա՛յնչափ արագ իրարու յաջորդեցին՝ ինչպէս Եարմուկի մեծ ու ճակատադրական ճակատամարտը (636), որ որոշեց Ասորւոց եւ Պաղեստինի բախտը, ինչպէս որ Եգիպտոս եւ Միջագետաց առումը, եւ նոյն տարւոյ Կադիսիոյ ճակատը՝ Պարսից կործանման սկիզբն էր, եւ ամբողջ Արեւելք Արաբացուց ձեռք ինկաւ : Իսկ երբ Հերակղ կը մեռնէր (641ին)՝ կորսուած էր արդէն Եգիպտոս ալ, եւ միակ մնացած Աղեքսանդրիան ինկաւ քիչ յետոյ (643) : Եւ քանի որ Հռոմէական պետութեան արեւմուտքն ալ շատոնց նման արշաւանաց ենթակայ էր՝ Բիւզանդեան Պետութիւնն — ինչպէս կ'ոչուելու է ասկէ ետքը՝ — բացի եւրոպական Հեմոս թերակղզիէ ունէր միայն Փոքր-Ասիան՝ որ նոր վտանգի ներքեւն էր : Պարսկաստանի անկումն ինքնին կը բերէր Պարսկահայաստանի ալ ողողումը արաբացի զնդերէ, թողլով արդէն այն արշաւանքներն՝ որ բնականաբար պիտի յաջորդէին Միջագետաց հետ նաեւ հռոմէական նոր «Դ Հայոց» Միջագետաց

<sup>22</sup> «Համառոտութիւն Բիւզանդեան կայսրերի պատմութեան», թրգմ. Մեսրոպ Եպ. Տէր-Մովսէսեան, էջմ. 1901, էջ 110 եւն :

անկմամբ : Շատ շուտ Արաբաց ձեռքն էին ինչպէս Մարտին-Մծրին՝ նոյնպէս Ամիտ-Նիրկերտ-Բաղէշ եւ նախ Խլաթ (638—640) : Նոյն իսկ Դուրն առնուած կ'ըսուի այս տարին, թէեւ իրական ծանր հետեւութեամբ եւ մեծ դերութեամբ առումը, զոր աղբերք կը նկարագրեն, եղած ըլլալու է երկրորդ արշաւանքին (646/47) երբ՝ ըստ արաբական աւանդութեան՝ առաջին անգամ առնուեցաւ նաեւ «Կալիկալայի» (Qāliqalā, Կարին) : Ասկէ յառաջ այն դաշնադրութիւնը՝ «ուխտ ընդ մահու եւ ընդ դժոխոց դաշինս»՝ ինչպէս կը բացատրէ Սեբէոս (Գ, լե)՝ զոր «կոնցին «Թէոդորոս Ռչտունեաց տէր ամենայն իշխանօքն Հայոց» եւ «հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայէլի» (Իբր 641—643) . եւ միաբան էին, կ'ըսէ, «Վրացին եւ Աղուանն եւ Սիւնին» (Սեբ. ամբողջը կը նկատէ ապստամբութիւն մը «ի թագաւորութեանէն Յունաց») : Կոստասի (Կոստանդիանոս, 641—668) ինկած էր դժուարին գործն՝ Արաբական հեղեղին առջեւ դռնէ թումբ մը զննել, եւ մասամբ յաջողեցաւ, մանաւանդ երբ կար դիմացը Մուսուլիա մը՝ Ասորւոց հանձարեղ եւ հզօր զործակալը, որ արդէն կանուխէն իսկ տորմողով անգամ սկսած էր յարձակումները (Կիլարոս, Հոռոտոս եւն) : Կայսրը մեծ բանակաւ ալ աճապարեց Հայաստան եւ Կարին մտաւ (653) ուր ժողովեցան «իշխանք եւ զօրք Դ Հայոց...» նաեւ «Ռչտունականէն» (միով բանիւ տակաւին չվտանգուած Հռոմէական բաժնին իշխանքն (Սեբ. կը յիշէ մեծ մասը՝ նախարարութեանց եւ դաւաճաց անուամբ) եւ հաւատարմութիւն կը խոստացուի : Կայսրը նաեւ Դուրն, որ ուրեմն կը գրաւուի՝ Այրարատի միւս մասով, եւ ուր չի մոռցուիր նաեւ այս նեղ պարագաներուն՝ բիւզանդեան հին քաղաքականութիւնը՝ եկեղեցական եւ դաւանաբանական խնդիրները խառնելու, քաղաքականութիւն մը՝ որ էապէս նպաստեց Արաբական աշխարհակալութեանց (Ասորական եկեղեցիք, Խպտիք եւն) : Հոս ալ նոյն եղաւ արդիւնքը : Կայսեր դառնալուն՝ ստիպուեցաւ Կաթողիկոսն ալ ի Տայս ապաստանիլ, եւ հակառակ կուսակցութիւնը (Թէոդոս Ռչտունի եւն) Արաբացուց օգնութիւնը խնդրեց : Անկարող էր պաշտպանել նաեւ Կայսեր դրած Մաւրիանոս զօրավարն՝ իւր բանակով՝ եւ իւր ձեռքով աւերեց Դուրնայ բերդն եւ Նախճաւանի քով յաղթուելէն ետքը՝ Վրաստան եւ անկէ դէպի

Տրապիզոն քաշուեցաւ՝ չմոռնալով, եթէ անսանք Սեբէոսի, աւարելու երկիրը : «Փախեաւ Հոռոմ եւ անկաւ ի Տայս, եւ հանին անտի» եւն : Արաբացիք միով բանիւ տիրած էին՝ բացի Պարսկահայաստանի մասերէն՝ նաեւ Հռոմէահայաստանի մեծ մասի մը (654ին) եւ տիրելով Կարնոյ՝ ամբողջացած էին իրենց դիրքը նաեւ հիւսիսակողմը : Հայ նախարարաց այլեւայլ ապստամբութիւնք (առաջինն 656/57ին, թողլով ուրիշները) զսպուեցան միշտ, որչափ ալ ասոնք կապ ունէին Հռոմայեցուց ճգանց հետ՝ որոնք ի վերջոյ չկրցան պահել նոյն իսկ իրենց բաժինն՝ ամենամեծ մասամբ : Մինչեւ է. դարու վերջերը՝ Յուստինիանու Բ. օրով (685—695, յետոյ 705—711) Հռոմայեցիք պահած էին Բարձր-Հայոց մեծ մասին հետ՝ Ծովական Դ Հայքը, աւելի եւս Եփրատէն անդին բուն Փոքր-Հայքը, Բ Հայք (Սեբաստիա) եւ նաեւ զեռ Ա Հայք (Մելիտենէ) : Բայց ճիշդ Դ Հայք եւ Մելիտենէ ենթակայ էին ամէնէն աւելի գրեթէ ամէն տարի կրկնուող արշաւանաց, Ը. դարու սկիզբը՝ արդէն գրեթէ աւերակ եղած էին : Արաբական այս արշաւանքները՝ որ կրկին սաստկութեամբ սկսած էին (663էն ի վեր), եւ հասած նաեւ Կ. Պոլսոյ դուռը (668, նաեւ տորմիղը պաշարեց Կ. Պ.՝ 677ին), տեւական արդիւնք չունէին յաճախ, եւ Արաբք մինչեւ անգամ երեսնամեայ խաղաղութիւն մը զննելու յօժարած : Այս խաղաղութեամբ կերպով մը կարգադրուած էին նաեւ Հայաստանի եւ Վրաստանի խնդիրները, երբ Յուստինիանոս ինքը լուծեց խաղաղութիւնը՝ առանց հիման . բայց Կիլիկիոյ մէջ այնպիսի շարաշար պարտութիւն մը կրեց (692ին), որչափ ալ դաւաճանութեամբ իւր Սլաւ զօրաց, որուն հետեւանքն եղաւ ամբողջ Հայաստանի՝ երկար շրջանի մը համար՝ Արաբացուց ձեռք իյնալը (693ին) : Ինչպէս նաեւ Լազիկէ (696ին՝ մատնութեամբ Սերգիոս Պատրիկ . վերջինս քիչ մ'ետքը կրցաւ կրկին անկախ ըլլալ) : Օգուտ չունէին նաեւ Տիրերիոս կայսեր (Ապսիմարոս, 698—705) եղբօր Հերակղի այլեւայլ յաղթութիւնքն, Արաբացիք մտան նոյնպէս Կիլիկիա, ինչպէս յետոյ տիրելով Տիւրանայ (709)՝ ոտք դրին Կապպադովկիա : Օգուտ չունէին Հայաստանի արշաւանքները եւ անոնց նպաստող Հայոց ապստամբութիւնը, եւ նաեւ մասնակի յաղթութիւնքն (Վարդանակերտ՝ 702 եւն) : Արգիւնքն եղաւ՝ ապստամբութեան զսպուելէն

եաքը, այն՝ ըստ երեւութիւն մեծ դաղթակա-  
նութիւնը՝ որ կը յիշուի Փիլիպպիկոս Վար-  
դան կայսեր (711—713) օրով, որ նոյն  
Հայերը ստիպեց բնակիլ արդէն աւերած ու  
ամայացած Դ. Հայոց եւ Մելիտենեայ շրջա-  
նին մէջ (712) դործ մը՝ զոր յոյն պատմա-  
գիրք մարդասիրութիւն կը նկատեն, անա-  
ղանադոյն հայ աղբերց մաս մը՝ իբր հալա-  
ծանք (հմմտ. «Հայ կայսերք», էջ 129—151,  
315—322), թէեւ վերջնոյս համար պատճառ  
մը չկար: Յամենայն դէպս այս միջոցին վերջ-  
նականապէս՝ երկար ժամանակի մը համար՝  
կորսուեցան թէ Դ. Հայք եւ թէ Մելիտենեայ  
շրջանը, ինչպէս Կիլիկիա: Ամէնէն սաստիկն  
էր յամենայն դէպս արարական արշաւանքն  
այս միջոցին, երբ մէկ կողմանէ Մալաթիոյ  
առնուելով մինչեւ Պոնտոս կը տարածուէր,  
նաեւ Ամասիոյ առնուելով (713) միւս կող-  
մանէ Պիսիդիոյ Անկիոյ առնուելով (713)  
Պերգամոնի տիրելով եւ աւերելով (716)  
ամբողջ Փոքր-Ասիան վտանգուած էր, եւ ա-  
րարական բանակը՝ Հելլեսպոնտոսն ալ  
անցնելով՝ պաշարած էր մայրաքաղաքը, ծո-  
վէն ալ տորմիլ մը: Կործանման այս վայրկե-  
սին, երբ Ուպսիկեան բանակաթեմը դահ կը  
հանէր Անաստաս Բ. (713—715) եւ Թէոդո-  
սիոս (715—717) կայսրները, փրկութիւնն եւ  
նաեւ վերածնունդ բերին Անադոլեան բանա-  
կաթեմը՝ Լեւոն Իսաւրացիով եւ Հայկականը՝  
Արտաւազդով, եւ Լեւոն դահ ելլելով (717—  
741) ցուցուց թէ արժանի էր: Արարացիք՝  
տարի մը դիմանալով մայրաքաղաքի դրանց  
առջեւ, ի վերջոյ մեծ կոտորածով յետս  
մղուեցան (718) ցամաքէն ու ծովէն, եւ  
այնուհետեւ ալ անցած էր արարական  
վտանգը՝ ընդհանուր պետութեան համար,  
մանաւանդ միջուկան յաղթութեամբ Ակրոյի-  
նեայ մօտ (740): Բայց սահմանադաւառք  
մնացին նոյն վիճակին մէջ, եւ արշաւանքներ՝  
երկու կողմէն՝ գրեթէ անվերջ են սակէ ետքն  
ալ: Արդիւնքն էր յաճախ լիակատար աւե-  
րումն (յատկապէս Կապպադոկիա Ա.,  
Ա. Հայք եւն), եւ ոչ ուրիշ բան մը: Եթէ՝ օրի-  
նակի համար՝ Կոստանդին Ե. (741—775)  
կրնար առնուլ Մելիտենէն, Գերմանիկէն ու  
դարձեալ Կարինը (752)՝ օգտուելով Արա-  
բացոց ներքին խռովութիւններէն (Օմայի-  
տեանք եւ Աբբասեանք), ջիշ մ'ետքը նորէն  
կը փոխուէին իրերը (756): Եւ եթէ՝ դար-  
ձեալ օրինակ մը բերելու համար՝ Թէոփիլոս  
կայսեր օրով (829—842)՝ նաեւ քրիստոնէայ

եղող պարսիկ իշխանի մը մեծ օգնութեամբ  
(Թէոփիլոս՝ փեսայ կայսեր) յաջող կ'երեւար  
Յունաց արշաւանքը, կ'առնուէր Շամշատ  
եւն (837), իրական արդիւնքը կ'ըլլար միայն  
Դ. Հայոց լիակատար անապատ ըլլալը (աւե-  
րումն Անդղի ի Դէզիս, ամբողջ Հանձիթի,  
Աշմուշատի, Պաղինի, Մեծկերտի եւն): Իսկ  
հակահարուածն եղաւ Մութասիմի (որուն  
ծննդավայրն ալ աւերուածն էր) ամենակա-  
տողի յարձակումն մինչեւ Ամորիոն, որուն  
առումն՝ ամենադարձուբելի վրէժ մ'եղաւ  
(838): Յոյնք նաեւ այս անգամ՝ ինչպէս շատ  
յաճախ՝ ստիպուած էին խաղաղութիւն դնել  
ծանր պայմաններով: Արարացիք պաշտպա-  
նած էին յետոյ իրենց սահմանները՝ լիակա-  
տար ամբուրթիւններով ալ: Այսպէս նշանա-  
ւոր Հարուն-ալ-Ռաշիտ նաեւ Մալաթիայէն  
մինչեւ Տաւրոս ամբուրթեանց շարք մը բար-  
ձրացուցած էր (786): Ասոնք յիշուեցան իբր  
օրինակ իրաց վիճակին՝ որ տեւեց դոնէ  
մինչեւ Թ. դարուն վերջերը, երբ իրերը կը  
փոխուէին իրացէս, մէկ կողմանէ Բարսեղ Ա.  
կայսերով (867—886) հայ հարստութիւն մը  
կ'ելլէ Բիւզանդիոնի դահ վրայ, որով Բիւ-  
զանդեան Պատմութեան ամենամեծ շրջանը կը  
սկսի (867—1025) եւ միւս կողմանէ հայ իշ-  
խանաց՝ ի մանաւորի Բագրատունեաց ան-  
խոջ աշխատանքը՝ կը պսակուի Բագրատու-  
նեաց թագաւորութեան հաստատմամբ, բացի  
Բիւզանդիոնէ՝ նոյն իսկ Արարական խալի-  
ֆայի կողմանէ ճանչցուելով (Աշոտ «Իշխա-  
նաց իշխան», 859. Թագաւորութիւն՝ 885):  
Մեր նպատակը չէ՝ ո՛չ Հայոց դիրքը  
նկարագրել արարական իշխանութեան ա-  
տեն<sup>23</sup>, ո՛չ ալ Բագրատունեաց պատմու-  
թիւնը հիւսել<sup>24</sup> եւ ո՛չ ալ Բիւզանդիոնի եւ  
Հայաստանի յարաբերութեանց լիակատար  
պատմութիւնը գրել (հմմտ. Հ. Կ. Տէր-Սա-  
հակեանի՝ «Հայ Կայսերք», Հտր. Ա. եւ Բ,  
Վենետ. 1905: Թէեւ միայն այլեւայլ կայսե-  
րաց պատմութիւն՝ եւ ուրիշ գործեր. այս-  
պէս Չմչիկիկ կենսագրութիւնը՝ երկասիրու-  
թեամբ Շլումբերգերի, թրգմ. Ն. Քարա-  
մեանցի եւն, յիշելու համար միայն դասոնք):  
Բագրատունեաց գործը շատ մեծ եղած է

<sup>23</sup> Հմմտ. Մ. Ղազարեան, «Հայաստան Արա-  
բացոց իշխանութեան ատեն», 1902, գերմ. եւ  
ուրիշ գործեր:  
<sup>24</sup> Հմմտ. Հ. Ղազարեան, «Հիմնարկութիւն  
Բագրատունեաց», Բերլին 1893 (գերմ. թոփեան,  
«Բագրատունեաց եւ Եկեղ. Պոմ. Աշոտի Ա. եւ Մմբա-  
տայ Ա. օրով», Բերլին 1905, գերմ. եւ ուրիշ գործեր:

(հմմտ. Հ. Ղ. Ալիշանի հսկայ գործերը՝  
«Շիրակ», Վենետ. 1881, Այրարատ», 1890):  
Էական էր Բիւզանդիոնի եւ Հայոց մէջ տի-  
րող համերաշխութիւնն, որով իրացէս Արա-  
բացոց տիրապետութիւնը կրցաւ յետս  
մղուիլ: Եթէ Բարսղի օրով արշաւանաց  
(Շամշատ եւ Դ. Հայք՝ 872) արդիւնքը շատ  
մեծ չէր, այնու որ Մելիտենէն չկրցաւ առ-  
նուիլ, շատ մեծ էր յաջողութիւնն Կոստան-  
դին Միրանաճնի (913—959) եւ իւր գահակից  
Ռոմանոսի (919—944) օրով, երբ հայազգի  
Գուրգէն («Գուրգուս») զօրավարը՝ գրեթէ  
քսանուերկու տարի պատերազմներ մղելով՝  
յաջողեցաւ դարեւէ վեր արարական էմիր-  
ներու ձեռք եղած աշխարհաց բաւական մաս  
մը վերստին գրաւել: Անսովոր պարագայ մըն  
էր որ նոյն իսկ Մելիտինոյ արարացի էմիրը՝  
Արու-Հաֆս դաշնադիր եղաւ (928) եւ արա-  
բական յարձակմանց այս կենդրոնը, որ միան-  
դամայն կ'իշխէր Եփրատի գլխաւոր կամըր-  
ջանքին, Յունական պաշտպանութեան տեղի  
եղաւ, եւ նոյն էմիրը պատերազմակից էր  
նոյնպէս: Մելիտինոյ տիրապետութիւնը  
վերջնական եղաւ միայն յետոյ, երբ յաջորդ  
էմիրն ուրիշ ընթացք բռնեց, եւ Մելի-  
տինէ կրկին այրացաւ եղաւ բայց վերջա-  
պէս առնուեցաւ (934): Աւելի տեւական էր  
դարձեալ Դ. Հայոց գրաւումը՝ որով՝ արդէն  
կանխաւ յետս գրաւած Կսոմախ-Եկեղեաց  
շրջանի վրայ՝ Խոզան-Արշամաշատ շրջաններն  
եւ աւելին ալ, եւ «Ռոմանոպոլիս» (Բալու)  
եւ նման անուանք կը ցուցնեն թէ Բիւզան-  
դացիք հնութեան շրջանները վերանորոգելու  
ատենն եկած կը կարծէին: Ինչպէս Միրանա-  
ճին ինքնին կը գրէ Մելիտինեանց տիրապե-  
տութեան համար անհրաժեշտ էին «Հանձիթ  
եւ Ռոմանոպոլիս», եւ ասոնք՝ նախընթաց-  
ներուն հետ կազմեցին «Մելապետք» բանա-  
կաթեմը: Թէ նաեւ այս ժամանակ հայ գաղ-  
թականութիւնը չէին դադրել, կը ցուցնէ  
այն պարագան որ՝ ինչպէս կը պատմէ Միրա-  
նաճին, նշանաւոր Մելիտսը վերականգնեց  
Լիւկանդոսը (Մելիտինեայ արեւմտակողմը),  
լեցուց այն գաւառները Հայերով, այնպէս որ  
կրցաւ կազմուիլ «Լիւկանդոն» բանակաթեմը:  
Այս շրջանին մէջ յիշուած «Կարբերք» գա-  
ւառը պէտք չէ շփոթել Դ. Հայոց Խարբերդին  
հետ: Սակայն պէտք չէ իրերը նկատել դար-  
ձեալ այնպէս թէ այս եւ նաեւ յաջորդ կայ-  
սերաց արշաւանքները միշտ տեւական ար-  
գիւնք կ'ունենային: Ի դուր եղած չէր արա-

բական տիրապետութիւնն՝ առանձնապէս  
Մելապետաց եւ մերձակայից վրայ: Ժողո-  
վրդական ստուար խաւ մ'իսլամ եղած էր,  
եւ ամէն նշանաւոր քաղաք էմիրներու նիստ  
մ'եղած էր՝ որոնք գիտէին իրացէս պաշա-  
պանել իրենց շահը: Արշաւանաց դառնալէն  
ետքը՝ յաճախ իրերը նախկին դրութեան մէջ  
էին, նաեւ ուր հպատակութեան նշան մը  
կար՝ հարկ տալ: Ռոմանոսի օրով Դոնուայ  
պաշարումը ի սկզբան (919) նոյնչափ ան-  
յաջող էր, որչափ յաճախ վաղանցուկ արշա-  
ւանքներն՝ որոնք հասան մինչեւ Մծբին, որ  
առնուեցաւ ալ: Կարին ալ՝ օրինակի համար՝  
առնուեցաւ միայն յետագայ արշաւանքնե-  
րուն, Չմչիկիկ՝ տակաւին զօրավարի՝ ձեռք  
(950): Բայց յետոյ նորէն կորսուեցաւ, եւ  
Վասիլ ստիպուած էր վերաշինել (1019), եւ  
յաջորդեց Սելճուկեանց անուր կործա-  
նումը՝ թէ Կարնոյ թէ՛ մանաւանդ Արճնի  
(ուր սպանուածներու թիւը կը գրուի անգամ  
ԺԵ. իւր.) Սմբատարեղի ի Մանանդի  
եւն (1048): Այսպէս՝ յաճախ փոփոխ ըլլա-  
լով ալ իրաց վիճակը՝ Թ. եւ Ժ. դարերը վե-  
րածնունդ մ'եղան արեւելից համար: Եւ  
Աշոտ Երկաթ (915—928) կրցաւ իրօք եր-  
կիրը մաքրել «Արար»ներէն, որոնք Սմբատի  
օրով նորէն գերիշխող եղած էին, եւ որչափ  
ալ նաեւ իւր օրով չպակսեցան ներքին  
դժուարութիւնք, իբր «չահնահ» (922) իրա-  
կան գերիշխանութիւն ունէր ոչ միայն հայ  
մանր իշխանութեանց (տակաւին նաեւ Վաս-  
պուրականի՝ որ յետոյ անկախ դիրք առաւ),  
այլ նաեւ Աղուանից, Վրաց եւ Աբխազներու  
արքայից եւ իշխանաց վրայ: Եւ ցորչափ  
տեւեց Հայոց եւ այս աշխարհաց եւ դարձեալ  
Բիւզանդացոց համերաշխութիւնը՝ իրա-  
պէս, որչափ ալ այլեւայլ պատերազմները  
փոփոխ բախտ ունենային, յառաջադիմեց ու  
զարգացաւ վերածնունդն, եւ Հայաստան  
կրկին եղաւ (Գէլցէր) «նախագուռն քրիստո-  
նէութեան պաշտպանութեան» եւ «Հայք եւ  
Վերք իրենց ձեռքն ունէին, արեւելից  
բախտը՝ իրենք ըլլալով նաեւ Բիւզանդեանց  
բանակներուն զլխաւոր ոյժը: Յառաջխաղա-  
ցութիւնը շարունակուեցաւ յաջորդ կայսե-  
րաց օրով (Ռոմանոս Բ. 959—963), Նիկե-  
փոր Բ. (963—969) կրցաւ արդէն յետս գրա-  
ւել Կիլիկիան եւ նաեւ Ասորիքը եւ Մելապե-  
տաց մասը՝ մինչեւ Եփրատ, իրենց Նիկեփոր  
Փոկաս զօրավարի յաջողութեամբն, առնուլ

նաեւ Հալէպը եւ այլեւայլ արշաւանքներով կրցան առնուիլ նաեւ Անտիոք եւ Հալէպ, իսկ Բուրցիս եւ Պետրոս զօրավարք նաեւ Դամասկոսը (962—968), երեք դարէ աւելի արաբական տիրապետութենէ ետքը: Գաղաթնական կէտն էին նշանաւոր Յովհ. Չմշկիկի (969—976) արշաւանքներն, որ սիրուեցան ինչպէս Միջագետաց վրայ Եղեսիայէն Մծբին (Ամզայ եւ Նփրկերտի էմիրներն ալ հարկատու եղան), նոյնպէս ամբողջ Ասորիք՝ Լիբանանի վրայէն մինչեւ Բէյրութ: Եւ սակայն նաեւ ասոնց շատն անցողական արդիւնք ունէին, եւ նոյն իսկ Անտիոք կայսեր դէմ դրաւ եւ իւր օրով չկրցաւ առնուիլ: Վասիլ «Բուլղարասպան» (976—1025)՝ բացի ներքին դահակալական խռովութիւններէն (Վարդ Փոկաս կայսր հռչակուած Քուրսեան բանակէ՝ 987ին եւ Հայոց եւ Արարացոց ալ հակակայսրը հռչակուած Վարդ Սիլբերոս), զբաղած էր Բուլղարաց վտանգին վերջնական կարգադրութեամբ (հոն գործող անձինք են՝ Գրիգորիս Տարոնցի, Բուլղարաց Սամուէլ արքային փեսայ Աշոտ եւն): Արեւելից գործերը պէտք էր որ կաղային, թէեւ չէին պակսիր մասնակի յաջողութիւններ: Հալէպ նոյնպէս կորսուեցաւ, ինչպէս Միջագետք՝ որոնց մանր էմիրներն արդէն կը շարունակուէին: Այսպէս՝ օրինակի համար՝ Նփրկերտի (Մուֆարդին) վրայ կանոնաւոր յաջողութեամբ իշխած են նոյն իսկ Մրուանի — նոյն անուան ամիրապետութեան հիմնադրի — որդիքն ու անոնց ցեղը, սկսելով Աբու Ալի՝ ալ-Հասանէ (990/91ին), փոխն ի փոխն իշխելով նաեւ Ամզայ (Տիարբեկիր) եւ Հասանքէֆի, իսկ Աբու-Նասր Ահմատ տարածեց իւր իշխանութիւնը մինչեւ Ուսֆա եւ մինչեւ Ջեղիրէ (Իբն Օմար): Ասի (ի 1062ին) նոյնպէս շինարար էր, ինչպէս այս էմիրներէն շատերը: Երբ հռչակաւորն Սալահադին՝ Խաչակրաց ծանօթ հակառակորդը, դրաւ նփրկերտն ու շրջակայքը (1185), նոյն էմիրութիւնը տուաւ իւր եղբոր՝ Սայֆ աղ-Դինի (1192), որ իւր աթոռը փոխեց Խլաթ եւ իւր դրամոց վրայ «Շահ-արմէն» կը դրոշմէր, իւր որդւոյն թողով Նփրկերտը: Այս էմիրութիւնք ալ վերջ գտան Մոնղոլներու արշաւանքներով, որոնք արդէն անգամ մը աւերած էին (1231) այս աշխարհները, յետոյ քար քարի վրայ չթողուցին (1260): Այս էմիրներու շինարարութեան վկայ են նշանաւոր շինութիւնքն ու արձանագրութիւնքն ալ (համար. ի

միջի այլոց՝ Լէման, «Վաղեմի եւ արդի Հաստան», էջ 422—429): Ասի յիշեցինք՝ ցուցնելու համար իրաց իրական վիճակն, երբ անդին Հայք ու Վիրք, ներքին երկպառակութեամբք մանր իշխանութեանց բաժնուած, ուղղակի առիթ ալ կ'ընծայէին դահակալական վէճերով՝ Բիւզանդեանց միջամտութեան, որոնց քաղաքականութիւնն լիովին մահաբեր եղաւ ամէնուն՝ բայց մանաւանդ Հայոց համար: Դաւթի՝ Վրաց եւ Տայոց՝ իշխանի մահը (999), որ — նոր քաղաքականութեամբ՝ որ այնուհետեւ կը կրկնուի — ժառանգ կարգած էր Վասիլ կայսրը, պատրուակ էր՝ ինչպէս Վրաց իրերը կարգադրելու նոյնպէս խառնուելու Հայոց գործերուն, ուր նոյնպէս պակաս չէին խռովութիւնք՝ Գաղկայ մահուանէ ետքը: Յիմարադոյն քաղաքականութիւնն էր՝ դոր այս միջոցին՝ գործադրեց Վասպուրականի արքայն Սենեքերիմ: Հայոց աշխարհի վրայ սկսած էին արդէն երեւնալ Սելճուկեան հրոսակները, որոնց գործը պիտի ըլլար դոհել Հայաստանի եւ բովանդակ Փոքր-Ասիոյ նաեւ այն միջոցին բարձր կրթութիւնը: Ինչ որ ասոնք թողուցին՝ յետոյ լիակատար լրացուցին աւելի սոսկալի Մոնղոլները: Մեծադոյն վտանգի այս միջոցին՝ հայ իշխանք եւ Բիւզանդեանց արքունիքը զբաղած էին իրենց երկիրները փոխանակելու խնդրով: Սենեքերիմ՝ տեսնելով երկիրն աւերածութիւնը՝ ելք մը գտաւ եւ իւր Դաւիթ որդւոյն պատուիրապետութեամբ դաշնագրութիւն ըրաւ (1016) կայսեր հետ, տալով անոր ամբողջ երկիրը (ըստ հայ պատմագրաց՝ 10 քաղաք, 72 բերդ, իւր հազար զիւղ), փոխարէն ընդունելով Սեբաստիան եւ շրջակայքը՝ ի բնակութիւն, ուր անցաւ՝ հետ տանելով, եթէ հաւատանք տրուած տեղեկութեանց, զբեթէ կէս միլիոն ժողովուրդ (1021): Հայ երկիրն այս քայքայումը՝ չէր կրնար հաւասարակուել Բիւզանդեանց նոր «Վասպուրական» («Ասփրականիա») նահանգ մը վաստակելով, եւ ոչ ալ շրջակայ էմիրներու (Բերկրի, Մանազկերտ, Արճէշ, Խլաթ եւն) հարկ մը տալը մեծ յաջողութիւն մըն էր յինքեան, ինչպէս տեսանք, որչափ ալ մեծ երեւցաւ Յունաց՝ Բուլղարաց նուաճմամբ եւ Հայաստանի այս մասին կցմամբ եղած յաջողութիւնը, պետութեան սահմաններն այնչափ ընդարձակուած ըլլալով՝ որչափ չէր եղած Յունտիրանոսի օրէն ի վեր: Այնուհետեւ ժամա-

նակի խնդիր էր միւս մանր իշխանութեանց եւ բուն Բագրատունեաց ալ անկումը, եւ Վասիլ արդէն խոստում առած էր Յովհաննու Սմբատայ արքայի մահուանէն ետքը՝ Անուոյ տիրելու: Կազմուած էր նաեւ յունասէր կուսակցութիւն մը, նաեւ կրօնական՝ առաջնորդութեամբ Եկեղեցեաց յոյն մետրապոլիտն: Իրաւունք ունի թերեւս Գէլցէր ըսելու թէ այս ամէնն աւելի ժամանակին սխալմունքն էր, քան կայսերաց, որոնք յաճախ կուուեցան Կ. Պոլսոյ ծերակուտական սակաւապետութեան մը դէմ, մեծ կալուածատիրութեան եւ բերդատիրութեան, ժողովրդեան հողադրկութեան եւ նաեւ յոյն կղերին չափազանց անհանդուրժողութեան դէմ, որով ամէն ազգաց իրաւունքներ ոտնակոխ կ'ըլլային եւ ամէն պաշտօն Յունաց կամ յունացելոց կը պահուէր: Անոր համար, կ'ըսէ, լաւ մտածուած չէր Հայկական եւ ուրիշ մանր իշխանութեանց ջնջումը, որոնց ժողովուրդը՝ ինչպէս ազգաւ նոյնպէս կրօնական կողմանէ օտար էր բուն Յունացմէ, եւ անոր համար յառաջ եկան այն վիճակները՝ որոնք տիրած էին Կ. դարուն Ասորիքի եւ Եգիպտոսի մէջ եւ որոնք էապէս նպաստեցին արարական տիրապետութեան: Որչափ ալ կայսերք նաեւ նորոգուած հայ երկիրները պաշտպանեցին ամբողջներով. եւ պահակապետութիւնը, իրենց էր այնուհետեւ Սելճուկեանց անվերջ արշաւանաց դիմադրել, տեղական նախարարաց եւ իշխանաց դադարելով եւ մնացողներուն անզօրանալով եւ իրապէս կայսերք յաճախ անկարող էին դիմադրել յոյն կղերի ճնշման, ո'չ միայն Հայոց մասին: Լաւազոյն օրինակ է Մելիտինեայ վիճակը: Այս քաղաքին առմանէն ետքը՝ Անտիոքի յակոբիկ պատրիարքին յորդորմամբն էր որ ասորական մեծ գաղթականութիւն մ'եկաւ չէնցընել աւերակ եղած քաղաքն ու շրջակայքը: Եւ Նիկիոսի կայսրը խոստացած էր որեւէ հալածանք չընէր: Իրապէս ծաղկած հասարակութիւն մ'եղաւ քաղաքը (28 եկեղեցի կ'ըսուի), եւ շրջակայքը (վանքերով եւ եպիսկոպոսանստերով): Եւ սակայն նոյն Մելիտինեայ յոյն մետրապոլիտը յաջողցուց՝ խոստման դրժելով, եւ ասորի եպիսկոպոսք ուղղակի կը բռնադատուէին կա'մ յունածէս ըլլալու կամ բանտարկել: Նոյն հալածանքն աւելի սաստկացաւ Կոստանդինոս Ը. (1026) աւելի Ջոյէ կայսրուհեոյ եւ իւր ամուսիններու (Ռոմանոս Արդիրոս՝ 1028—1034, Միքայէլ

Գ.՝ 1034—1044, Միքայէլ Ե.) օրով, եւ Մելիտինեայ շրջանի Ասորիք աւելի նախընտրեցին դուռնազուռ դադարել մահամտական երկիրները: Եւ այս քաղաքականութիւնը կը շարունակուէր, երբ Անտիոքի կուսակալը ծանր պարտութիւն կը կրէր (1029), եւ կայսրն ալ՝ երբ անձամբ եկաւ՝ Հալէպի եւ Տրիպոլի էմիրներէն ամենածանր պարտութիւն մը կրեց (1030): Սիփուանք մըն էր միայն Գէորգ Մանիակէսի՝ ինքնակոչ հրամանատարի մանր կռիւներու մէջ ունեցած յաջողութիւնը (յետոյ մեծ դեր խաղաց այս զօրավարը): «Ասորին Մարաստանի»՝ գլխաւոր քաղաքն էր Շամշատը: Մանիակէս կրցաւ տիրել նաեւ Ուսայի (1032): Յոյնք «Մարաստան» կը կոչեն այս միջոցին նաեւ Հայաստանի մասեր, ինչպէս Կիտրինոս Վասպուրականի Սենեքերիմը կը կոչէ իշխան «Վերին Մարաստանի»: Վերջապէս Կոստանդին Մոնոմախոս (1042—1054) կրցաւ գործադրել՝ հայ մանր պետութեանց հետ՝ տիրել նաեւ Անուոյ, ուր երկտասարդ Գաղիկ բաց ի ներքին խռովութիւններէ՝ ստիպուած էր իւր Գրիգոր Պահլաւունի զօրավարին հետ յետո մղել Սելճուկեանց արշաւանքները: Թէեւ անյաջող էր Անուոյ պաշարումը (1041), սակայն արդէն հզօր էր յունական կողմնակցութիւնը, եւ Գաղիկ՝ խաբկանօք Կ. Պոլիս կանչուած (1045), ստիպուեցաւ այնուհետեւ շատանալ՝ Սենեքերիմայ նման՝ Անին փոխանակելով Պիղուի եւ շրջակայից հետ: Յաջորդ տարին Անին առնուած էր (1046), եւ երբ անմիջապէս սկսաւ ուղղակի հալածանք, եւ ամէն կողմ յունածիտութեան տիրապետելու փորձը, հասկրցաւ իւր սխալը նաեւ Պետրոս Գետադարձ կաթողիկոսն, որ ի վերջոյ անխառն չէր այս իրաց: Կաթողիկոսը բանտարկել եղաւ Խաղտեաց-Առիճ բերդին մէջ (1051), յետոյ կոչուեցաւ Կ. Պոլիս, եւ միայն Ատոմայ Արծրունեոյ երաշխաւորութեամբ կրցաւ երթալ Սեբաստիա, ուր մեռաւ՝ Ս. Նշան վանքի մէջ (1059): Հոն ստիպուած էր մնալ նաեւ յաջորդը՝ Խաչիկ, եւ երբ Յոյնք նոյն իսկ կաթողիկոսի ընտրութեան արդելք եղան՝ Հայոց կաթողիկոսները ստիպուեցան թափառել աստանդական՝ մինչեւ որ դադար մը գտան Հոմմիկայ: Իրաւունք ունի Գելցէր ըսելու թէ Յոյնք անցեալէն ոչինչ սորված եւ ոչինչ մոռցած էին, եւ երբ Ռոմանոս Գիոզենէս (1067) արշաւանաց ատեն կ'երդնուր Հայոց

հաւատքը ջնջելու եւ Հայք բնականապէս ա- նէծք կը կարդային, անհասկանալի չէ Սել- ճուկեանց յաջողութեան զլխաւոր պատ- ճառը: Այլապէս՝ որչափ ալ անլուր էին Տուրքիի մը քանդուածները՝ անկարելի չէր երկրին պաշտպանութիւնը, եթէ դործակցէին նաեւ տեղացիք, եւ իրապէս Վասպուրականի մէջ Սելճուկները յաղթուեցան եւ նոյն իսկ Տուրքիի անձամբ պաշարուած Մանազ- կերտի՝ անյաջող էր: Բայց աւելի կ'արժէր Հայաստանի բազմաթիւ դաւառաց եւ քաղա- քաց լիակատար աւերումը եւ հող ու մօխըր դառնալը՝ մինչեւ Կարին ու Արծն (1048), եւ քանի որ պաշտպանութիւնը մնացած էր Բիւ- ղանդիոնի՝ վերջնական ելքը դժուար չէր գուշակել: Ո՛չ Կոստանդիանոս Դուկասի (1059—1067) եւ Ռոմանոս Դիոյլինէսի (1067—1071) ճգնաժամ, նաեւ մասնակի յա- ջողութիւնք չէին կրնար առջեւն առնուլ Ալ- փասլանի մը, որ յաջորդած էր Տուրքիի, եւ որուն անթիւ զնդերը դասական կը գործա- դրէին այն առակը թէ Ուր ոտք կը կոխեն՝ հոն միայն ամայութիւն կը տիրէ: Ազդուանից եւ Վրաց արքայք անձնատուր ըլլալով՝ համե- մատարար արժան պրծան, ճիշդ ինչպէս Կարուց Աբասեան Գագիկը, որ՝ քանի որ օրինակ ունէր առջեւն՝ փոխանակեց իւր եր- կիրը, կայսերմէ առնելով Ծուլմուղան՝ Կիլի- կեան Տաւրոսի մէջ: Այս փոխանակութիւնը եւ հայ իշխանաց դէպի Տաւրոս գաղթելը դոնէ ապարդիւն չանցաւ՝ Սենեքերիմայ գաղթականութեան պէս: Կիլիկիա կոցաւ երկրորդ հայրենիք ըլլալ Հայոց, մինչդեռ Սեբաստիա բախտակից էր Հայաստանի եւ Գամբաց: Անտիկ Անոյ առման եւ այրա- ցաւեր կործանման (1064) յաջորդեց Կարսը, եւ աւերումն սփռուեցաւ նախ մինչեւ Եփրատ, եւ յետոյ (1069) նաեւ Կապադոքի- կիա ողողուեցաւ հրոսակներով եւ կոտորածի ու աւերման ամէն սարսափ կրեց: Որչափ ալ Ռոմանոս կրցաւ Դ. Հայքէ վտարել Սելճուկ- ները եւ Խլաթ կը գրիմէր, անդին իւր Փիւր- բտոս գորավարը չարաչար կը պարտուէր ի Գամբաց, եւ Սելճուկներու աւարահարու- թիւնը կը հասնէր մինչեւ Իկոնիոն: Ամուր Մանազկերտի առումն լրումն էր այս ամէ- նուն, եւ այն կարեւորագոյն կէտին յետս զբաւումն պէտք էր ձեռք բերուիլ ամէն գնով: Ռոմանոս իրական մեծ բանակով եկաւ այս իրաց դարձան ընելու, եւ սուաւ ալ

Մանազկերտը. բայց այն գորարածինը՝ որ Խլաթը պիտի առնուր, պարտուեցաւ: Եւ արեւելքի բախտն որոշուեցաւ ի վերջոյ Մանազկերտի վճռական ճակատամարտով (1071), ուր Յունաց պարտութիւնը լիակա- տար եղաւ եւ կայսրն ալ դերի ինկաւ (թէ եւ մեծ դուժարով ազատեցաւ, բայց դուր էր զարձը՝ աչքերը բրեցին Ատանայի մէջ: Հա- յաստանի եւ Կապադոքիոյ կորուստը վերջնական էր, եւ այնու ջախջախած էր Բիւզանդիոնի այս ոյժը՝ որ միշտ առոյգ մնա- ցած էր, այս երկիրներէն առնելով իւր քա- ջաղոյն զնդերը, նշանաւոր գորավարներն ու մեծ կայսրները: Յոյնք չկրցան կանգնիլ այս ծանր հարուածէն (Գէլցէր), զոր սակայն իրենք պատրաստած էին իրենց ձեռքով: Որ- չափ ալ կար տակաւին Բարձր-Հայոց գիծը, բայց ա՛լ ոյժ չկար վերականգնելու կործա- նածը: Եւ երբ Ալփասլանի յաջորդեց Մելիք- Շահ (1072—1092) եւ իւր Սուլէյման եղբոր- որդոյն յանձնեց Յունաց գէմ պատերազմի շարունակութիւնը, վերջինս՝ մահացու հա- բուած տուաւ Բիւզանդիոնի նոյն իսկ բարե- կարգական դրութեամբ (զլխահարկէ ազա- տում գիւղացւոց, հողազուրկներու հող տալ եւն, գիւղացիութիւնն ասով Սելճուկներու հետ, եւ այս օրէն կը սկսի Փոքրասիական «հելլենացած» բնիկներու նոյն չափով թրքա- ցումը), մինչդեռ անդին դահակալական կռիւներ կը մղէին Յոյնք (Ուրսէլ՝ իւր Նոր- մանտացիներով եւ Կեսար Դուկաս): Արդէն այս անգամ Բիւզանդիոն ստիպուած էր Սել- ճուկներէն խնդրել՝ որ վերջ տան այս խոռ- վութեանց, որ իրապէս կատարուեցաւ, բայց Սուլէյման կանխաւ դաշնագիր եղաւ՝ որով ճանչցուեցաւ օրինաւոր տէր արեւելքի տի- րած բոլոր երկիրներուն (1074): Եւ եթէ Սուլէյման միայն զորավար էր՝ արդէն Ղլիճ- Ասլան «արքայ» էր Իկոնիոնի (Ղոնիա), եւ այն՝ «Հոռոմ» թագաւոր (1092—1110): Ասկէ անդին՝ ա՛լ պէտք չկայ շարունակելու:

(Շարունակելի:)

ՍԵՐԱՍԻՅԱՆ ՎԵՆՔԵՐԸ

1.

Ս. ԱԹԱՆԱԳԻՆԵՒ ՎԱՆՔԸ

Խանձառի մօտերը շէնքի մը աւերակ- ները կը տեսնուին: Կը կարծուի թէ վանքի մը հետքերն ըլլան<sup>1</sup>: Հոն բնակած է Ս. Աթա- նաղինէ եւ այս պատճառով անոր անունովը կնքուած է սրբավայրը, մինչդեռ ուրիշ ա- նուն ունեցած ըլլալու է (Նաթանեան Պ. Վ., Տեղեկագիր Ընդհանուր վիճակին Սեբաս- տիոյ, Կ. Պոլիս, 1877, էջ 162):

2.

ԱՆԱՊԱՏ ԿԱՍ ՁԱՐ (Ա.) ԽՓԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Սեբաստիայի հիւսիսային կողմը՝ Դաւ- րայ գիւղի ծայրը, Մայրազոմ լեռնաշղթային ստորոտը (Ս. Նշանի վանքէն դրեթէ քառորդ ժամը հեռի եւ անոր արեւմտեան կողմը) հիմնուած է Անապատ վանքը կամ Չարախա- փան Ս. Աստուածածին (Բիւզանդիոն, 1900, Թ. 1158): Ունի գեղեցիկ տեսարան եւ առողջարար օդ: Անոր տաճարը, որ Սեբաստիայի Պետրոս առաջնորդին հողա- տարութեամբը նորոգուած է<sup>2</sup>, փոքր է եւ ընծայուած Ս. Աստուածածին: Սարգի- սեանի օրով «եկեղեցին եւեթ կանգուն» էր, եւ «արտաքին որմունք մեկնաստանին», իսկ «բնակարանքն ի սպառ աւերակք» (Տեղա- դրութիւնք, էջ 64): Սակայն ետքէն շի- նուած են սենեակներ ուխտաւորներու հա- մար, որոնք ամառը հոն կ'երթային նաեւ օդափոխութեան համար (Սրուանձտեանց,

<sup>1</sup> Սեբաստիայէն 9 ժամ հեռու՝ Պաղչեճիք գիւ- ղին քովերն ալ կարծես հին վանքի մը մնացորդները կը գտնուին (Պայեան Տ. Եպ., Հայ Վանօրայք, Իզմիր, 1914, Ա., էջ 121—122):

<sup>2</sup> Կանխաւ զայն վերաշինած է Առաքել արքեպիս- կոպոսը: Տաճարին դրան ճակատը քարի մը վրայ դրուած է՝ «ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ ՎԵ- ՐԱՍԻՅՆ ՆՈՐՈԳԵՑԱԻ ԶԵՌԱՄԲ ԱԿՆԵՑԻ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԳԱՊԵՏԻ Ս. ՆՇԱՆԻ ԿԱՌՈՂԻԿԵՆ, Ս. ԱՍՏՈՒԱ- ԾԱԾՆԻ, Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՏԱՃԱՐԻՆ ՀԱՆԳԵՐՁ ԺԱ- ՄԱՏՆԵՐՈՎ ԵՒ ՊԱՐՍՊՈՎ, ՀԱՆԳԵՐՁ ԽՅՆԵՐՈՎ, ՕԳՆՈՒԹԵԱՄԲ ԿԱՄԻՍՊՈՅԻ ԹԵՒԵԲԵԼԼԵՍՆ Տ. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ 1176: ԴԱՐՁԵԱԼ ՎԵՐԱՍԻՅՆ ՆՈՐՈԳԵՑԱԻ ԶԵՌԱՄԲ ՆՈՅՆ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԳԱՊԵՏԻ Ս. ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՇՐՁԱՊԱՏ ՊԱՐԻՍՊ(Ը) ՀԱՆԳԵՐՁ ԽՅՆԵՐՈՎ ԱԿՆԵՑԻ Ս. ՍԵՂՈՍԵԱՆ, ԱՊՈՒԶԵԽՅԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՈՐ Է ՅՈՎԵՍՆ ԶԱՏԵ ԵՒ ԿԱՄԻՍՊՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻՆ ԵՒ ՄԱՐԿՈՍ ԱՂԱ(Յ)ԻՆ, ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ 1191: ԸՆԹԵՐՅՈՂՔ ԱՍՏՈՒԱԾ Ո- ՂՈՐՄԻ»: (Նաթանեան, Տեղեկագիր Վիճ. Սեբ., էջ 15—16):

Թորոս Աղբար, Ա., էջ 163—164, Պաղչեան, Հայ վանօրայք, Ա., էջ 106, Բիւզանդիոն, 1900, Թ. 1115 եւ Նաթանեան, Տեղեկագիր Ընդհ. վիճ. Սեբ., էջ 16—17, Նոր Այդ, 1913, էջ 101):

Անապատի հիմնարկութեան բոլոր սղա- րագաները կը մնան անձանօթ, սակայն Սե- բաստիայի հին վանքերէն ըլլալ կը թուի: Աւանդութիւնն անոր մատուցներէն մէկին շինութիւնը Ս. Թադէոսի կը վերադրէ (Նա- թանեան, անդ, էջ 16): Յայտաւորք մը՝ «Գրեցաւ (մատեանս) ի ՁԼԳ թվին (1284) ի հայրապետութեան Յակոբայ եւ ի թագաւո- րութեան Լեւոնի, ի մայրաքաղաքն Սեբաս- տիա, ի ձեռն Ռուբինեայ ի վանս Անապատ կոչեցելոյ» (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 391): Երկու դար յետոյ՝ «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց ՁԼԳ... ի յերկիրս Սեբաստիոյ, ի յանապա- տիս, որ հանդէպ Սեբաստիոյ է, ձեռամբ Փի- լիպոս Էպիսկոպոսի, ի դրան սուրբ Աս- տուածածնիս յիշեցէք ի բարին զհայրապետ վանիցս զտէր Խաչատուր արեղայ եւ զեղ- բայր իւր զՍողոմոն արեղայն եւ զմիւս Խա- չատուրն» (Սարգիսեան Հ. Բ., Մայր Յու- ցակ, Վենետ., Ա., էջ 598): Քանի մը տարի վերջը՝ 1499ին Խաչատուր արեղան Գանձա- րան մը կը գրէ՝ «Ի քաղաքս Սեբաստիա, ի վանս որ կոչի Անապատ ի դրունս սուրբ Աս- տուածածնին ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Սողոմոնի եւ տէր (տեառն) Խաչատուրին եւ այլ միւրան եղբարցս» (Հանդ. Ամս., 1927, էջ 316): Գրիգոր արե- ղան 1543ին «... ի վանգս Դահուոս ի դուռն սուրբ Աստուածածնին...» կը գրէ Աւետա- րան մը (Հանդ. Ամս., 1925, էջ 376—377). իսկ Սարգիս 1616ին՝ «... ի գիւղն, որ կոչի Դահուոս ի դուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Ստեփանոսին», կ'արտադրէ Տօնացոյց մը (Քէշիշեան Հ. Մ., Յուցակ հայ Ձեռագրաց Չմամուի, Թ. 407, անտիպ): Նոյն անձը մէկ տարի յառաջ (1615ին) կը գրէր Քարոզգիրք մը եւ անոր յիշատակարանին մէջ իր ուսուցիչին՝ Խաչա- տուրի մահը կը ծանուցանէր՝ «Արդ գրեցաւ սուրբ գիրքս ի Սեբաստիա ի գիւղն, որ կոչի Դահուոսայ ընդ հովանեաւ սուրբ Աստուա- ծածնին եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Ստե- փաննոսի Նախավկային... ի թուականիս Հայոց Ռ ու ԿԳ ամին, ի հայրապետութեան